

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԳՐՈՒՄ

2012թ. ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ.-ին ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործող տեղային ցանցը միավորել է տեխնիկական պահանջներին համապատասխանող 200 համակարգիչ:

Տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով, 2012թ.-ին այցելություններ են կատարվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ, որտեղ մասնավորապես կատարվել են հետևյալ աշխատանքները. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և մոդեմային կապը՝ համապատասխան գործակալությունների տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Երևանի քաղաքային գործակալությունում ներդրվել է նոր համակարգչային ցանց, գործող բոլոր համակարգիչները միացվել են համացանցին և տեղակայվել է հակավիրուսային ծրագիր:

«ԱրմենիաԻնֆո» ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մի շարք կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ համալրվել են նոր համակարգիչներով և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, կատարվել են դրանց տեղակայման և ծրագրերով համալրման աշխատանքներ:

Շարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ և սարքավորումների վերանորոգում:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Մարդահամարի վարչությունում 2012թ.-ին ընդլայնվել և կարգավորվել է տեղային ցանցը, ինչպես նաև տեղակայվել են անհրաժեշտ ծրագրային փաթեթներ և կենտրոնացված կառավարումով հակավիրուսային ծրագրեր:

2012թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ-ում շահագործվել են թվով 76 տվյալների բազաներ, ստեղծվել է 2 նոր ծրագրատեխնոլոգիական համալիր, ինչպես նաև 40 տարբեր ոլորտների ծրագրատեխնոլոգիական համալիրներում կատարվել են 100 փոփոխություններ:

Իրականացվել են www.armdevinfo.am կայքի վարման և արդիականացման աշխատանքներ.

- «ԱրմենիաԻնֆո» բազան ընդլայնվել է «Հիմնական վիճակագրական տվյալներ» ցուցանիշներով՝ ըստ հանրապետության և ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի,
- մուտքագրվել են 2005-2011թթ. ցուցանիշները,
- տեղակայվել է նոր տեղեկատվական բազա՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2012» վիճակագրական- վերլուծական զեկույցում ներկայացված տվյալների հիման վրա,
- «ԱրմենիաԻնֆո» բազան համալրվել է Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) ցուցանիշների 2011թ. տվյալներով:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում ստեղծվել է ArmStatBank տվյալների բազան, որը 2012թ. սեպտեմբերի 14-ին հասանելի է դարձել հանրությանը www.armstatbank.am կայքէջում: Մինչև տարեվերջ կայքէջում տեղադրվել են թվով 50 վիճակագրական աղյուսակներ (բազաններ)՝ PX-Web ծրագրով, PC Axis ձևաչափով, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվություն սպառողի համար մատչելի MS Excel, xml կամ այլ ձևաչափերով: Այն հնարավորություն է ընձեռել ներբեռնել տվյալները աղյուսակային, գծապատկերային, հետազայում նաև՝ քարտեզային պատկերավորմամբ: